

ՃԿՌՈՒՆ, ՃԿՌՈՒԴ, մ. հ., հակառակ, ի հեճուկս:

ՃՆՃՂՆԻՆ, Ա. ք., ճնճղուկները:

ՃՈԹ, մ. հ., ծայր:

ՃՈՎ, մ. հ., ? ճովերդ ի երդիքն ելեր կախուեր Է խոշոր ճեղերուն:

ՃՈՐՈՎ, մ. հ., բռնի:

ՃՈՒԱՊ, ա. ճեվապ, պատասխան:

ՃՈՒԿ ԱՌՆԵԼ, մ. հ., ծռիլ, շեղիլ, Ա. ք., ճուկ տալ, խոյս տալ մղմիւ, ճկուն ըլլալ (տես ճանիկեան):

ՃՈՒԿ, ճամբու անկիւնադարձը, ճուկ տալ, խոյս տալ, ճամբան՝ կամաց մը փոխել ու անհետանալ (տես ճանիկեան):

ՃՈՒՅԱՐ, ա. ճեվհար, գոհարեղէն:

ՃՈՒՂԱՊ, տես ճՈՒԱՊ:

ՃՈՒՊԱՅ, տես ՅԻՊՊԷ:

ՃՐԱԳՈՒ, ճարպ:

ՃՕՇԱՆ, մ. հ., կուրծքի զրահ, լանջապանակ:

ՃՕՇԱԼ, բամբասել, քաշկրտել:

ՃՕՇՔ, բամբասանք, ի ճօշք առնել, չարախօսութեան նիւթ դարձնել:

ՃՕՃԿՏԱԼ, մ. մ., շարժակիլ, կոտորուելով քալել. ճօճկտար միջին, մեջքը կը խաղցներ:

Մ .

ՄԱՉՄԱՆ, մ. հ., մազէ չուան կամ պարկ շինող:

ՄԱՉՊՈՒՆ, ա. ուժաքամ, վաստակաբէլ:

ՄԱԼՈՒՄ, ա. գիտցուած, ծնօթ:

ՄԱԼՈՒՄ ԱՆԵԼ, իմացնել, ծանուցել, ծանուցանել, յայտնել:

ՄԱԼՈՒՇ, ա. մալուզ, քարի կտոր, սրտիկս Է մալուշ եղեր-, սիրտս քարի կտոր դարձեր Է ?

ՄԱԽԻՐ, Ա. ք., մոխիր:

ՄԱԽՄՈՒՐ, ա. գինով:

ՄԱԽՄՈՒՐ ԽԱԼԻ, կակուղ գորգ, թաւիշէ գորգ ?

ՄԱԿԱՐ, տես ՄԷԿԵՐ:

ՄԱՅԱՆԱՅ, թ. պահանա, պատրուակ:

ՄԱՅՊՈՒՊ, ա. սիրելի:

ՄՍԼ, ա. ինչք, ապրանք:

ՄԱԼՈՒԼԵՐ, տես ՄԵԼԻԼԵՐ: